ԻՆՉՊԵ՞Ս ՀԻՍՈՒՍ ՀԱՂԹԱՀԱՐԵՑ ՃՆՇՈՒՄՆԵՐԻՆ

Հիսուսի Օրինակը - Մաս 2

1. Ինքնաճանաչում: Իմացիր թե դու ով ես

«...Ես եմ աշխարհքի լույսը...Քրիստոսը օրհնյալի Որդին... Ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը...կյանքի հացը...:» (Հով 8:12, Մար 14:62, Հով 14:6, Հով 6:35)

«Ես եմ որ ինձ համար վկայում եմ...» Հովհաննես 8:18

2. Նպատակաուղղվածություն: Իմացիր թե ում համար ես ապրում

«Որովհետև իմ կամքը չեմ որոնում, այլ ինձ ուղարկող Հոր կամքը:» Հովհաննես 5:30

«Ես միշտ նրան հաճելի բաներն եմ անում:» Հիվհաննես 8:29

«Ոչ մի ծառա չի կարող երկու տիրոջ ծառայել...» Ղուկաս 16:13

3. Մասնագիտացում: Իմացիր քո կոչումը

«...գիտեմ թե որտեղից եկա և որտեղ եմ գնում.» Հովհաննես 8:14

«Երկմիտ մարդը անհաստատ է իր բոլոր ճանապարհներումը:» Հակոբոս 1:8

«Աղաչում եմ ձեզ, որ այնպես գնաք ինչպես որ կ'վայելի այն կոչումին որի մեջ կանչվեցաք:» Եփեսացիս 4:1

4. Կենտրոնացում: Կենտրոնացիր ամենակարևոր բաների վրա

«Եվ եղավ, երբոր նրա վերանալու օրերը կատարվում էին, նա իր երեսը հաստատեց որ գնա Երուսաղեմ:» Ղուկաս 9:51

«Ոչ ով որ ձեռքը մաճի վրա է դնում և ետևին մտիկ անում, հարմար չի Աստծո արքայության համար:» Ղուկաս 9:62

«Ամեն բան օրինավոր էր ինձ, բայց ամեն բան օգուտ չէ. Ամեն բան օրինավոր է ինձ, բայց ամեն բան շինություն չի տալիս:» Ա Կորնթացի 10:23

5. Խորհրդածություն: Լսիր Աստծուն

«Եվ լուսածագին առավոտանց շատ կանուխ վերկացավ՝ դուրս եկավ գնաց մի անապատ տեղ, և այնտեղ աղոթք էր անում:» Մարկոս 1:35

«Բայց նրա վրա խոսակցությունը առավել ևս տարածվում էր. և շատ ժողովուրդներ ժողովվում էին՝ որ լսեն և բժշկվեն: Իսկ նա քաշվում էր անապատ տեղերանք, և աղոթք էր անում:» Ղուկաս 5:15-16

6. Համագործակցություն: Միացիր փոքր խմբի

«Եվ տասներկու հոգի կարգեց, որ իր հետը լինեն:» Մարկոս 3:14

«Հիսուսն ասեց նրանց. Հոգիս մեռնելու չափ տրտմած է. Այստեղ մնացեք, և ինձ հետ արթուն կացեք.» Մատթեոս 26:38

7. Հանգստություն: Ժամանակ հատկացրու հանգստանալու և վերալիցքավորելու

«Եվ նա ասեց նրանց. Դուք առանձին անապատ տեղ եկեք, և մի քիչ հանգիստ առեք. Որովհետև եկող և գնացողները շատ էին, և հաց ուտելու էլ ժամանակ չ'ունէին:» Մարկոս 6:31

«Մարդի որդին եկավ, ուտում է և խմում է...» Մատթեոս 11:19

Փրկություն

«Ինձ մոտ եկեք ամեն վաստակածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կ'տամ ձեզ: Ձեզ վրա առեք իմ լուծը և ինձանից սովորեցեք. Որովհետև ես հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեր անձերի համար հանգստություն կ'գտնեք:» Մատթեոս 11:28-29

Հաջորդ Քարոզի Թեման

ԻՆՉՊԵ՞Ս ՈՒՆԵՆԱԼ ՍԻՐՏ՝ ՀԻՍՈՒՍԻ ՍՐՏԻ ՆՄԱՆ

Հովիվ Սարօ Խաչիկեան